Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1250[7]-26.01.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 5-րդ մասում կիրառվող «մամուլի ու» և «մյուս» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 84-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի՝

ա. 1-ին կետում «:Ընդ որում, Ընկերությունները պարտավոր են սույն կետում նշված ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում» բառերը հանել,

բ. 2-րդ կետում «:Ընդ որում, Ընկերությունները պարտավոր են տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում» բառերը հանել,

գ. 6-րդ կետում «մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով.

2) 3-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «իրենց ինտերնետային կայքերում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 127-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետությունում առնվազն 2000 տպաքանակով հրատարակվող մամուլում,» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում,» բառերով:

Հոդված 4. Օրենքի 132-րդ հոդվածում «մամուլում» բառը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 5. Օրենքի 136-րդ հոդվածի 6-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում» բառերը փոխարինել «Ընկերության

ինտերնետային կայքում, http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 137-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում» բառերը փոխարինել «Ընկերության ինտերնետային կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով.

2) 6-րդ մասի՝

ա. առաջին նախադասությունում «հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը» բառերը փոխարինել «հաշվեկշռի վերաբերյալ հրապարակային ծանուցման նույնականացման համարը կամ հայտարարությունը հրապարակված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային փաստաթուղթը, ինչպես նաև հրապարակային ծանուցման հղումը» բառերով,

բ. երկրորդ նախադասությունում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող այլ հանրապետական մամուլում» բառերը փոխարինել «Ընկերության ինտերնետային կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 7. Օրենքի 138-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով» բառերը փոխարինել «Ընկերության ինտերնետային կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակմամբ» բառերով.

2) 8-րդ մասի՝

ա. առաջին նախադասությունում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով» բառերը փոխարինել «Ընկերության ինտերնետային կայքի, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով» բառերով,

բ. երկրորդ նախադասությունում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով» բառերը փոխարինել «Ընկերության ինտերնետային կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի

Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 8. Օրենքի 139-րդ հոդվածի 3-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում» բառերը փոխարինել «Ընկերության ինտերնետային կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: